Ո՞րն է տարբերությունը

Տնային խոհանոցում միկրոձեռնարկության աշխատանք **(MEHKO)** և Սննդի շարժական փոքր կետի աշխատանք **(CMFO)**

MEHKO	CMFO	ԵՐԿՈՒՍԸ
Տարեկան վաճառքի սահմանը $100000 է:	Վաճառքի սահմանափակում չկա:	Չեն կարող վաճառել ոստրեներ:
Չի կարող վաճառել օրական 30-ից և շաբաթական 90-ից ավելի կերակուր:	Կերակուրի վրա վաճառքի սահմանափակում չկա:	Չեն կարող արտադրել կամ վաճառել հում կաթ կամ հում կաթնամթերք:
Կարող է CMFO-ի հետ համատեղ աշխատեցնել MEHKO՝ համապատասխան թույլտվությամբ, բայց չի կարող աշխատեցնել Քոթեջում սննդի արտադրություն (CFO):	Կարող է CMFO-ի հետ համատեղ աշխատեցնել MEHKO կամ CFO՝ համապատասխան թույլտվություններով:	Պահանջվում է Հանրային Առողջության թույլտվությունը, և պետք է թույլտվության վկայականը տեսանելի լինի CMFO-ի վրա կամ MEHKO-ում:
Կարող է ծառայել որպես պատրաստման կետ (commissary) CMFO-ի համար (պետք է լինի նույն MEHKO-ի թույլտվություն ունեցողը):	Պահանջվում է պատրաստման վայր (commissary):	Կարող են ունենալ բողոքի վրա հիմնված ստուգումներ:
Ստուգումներն արվում են տարին մեկ:	Ստուգումները կարող են տարբեր լինել՝ տարին մեկից մինչև տարին երկու անգամ՝ կախված CMFO-ի ռիսկի գործոնից:	Դիմումի գործընթացում պետք է ներկայացնեն գրավոր / ստանդարտ աշխատանքային գործողությունները (WOP /SOP) և ճաշացանկը:
Շահագործողը պետք է ստանա Certified Food Protection Manager-ի (Արտոնագրված սննդի պահպանության վերահսկիչ) վկայական: MEHKO-ի մյուս անդամները պետք է ստանան Food Handler-ի (Սննդի հետ աշխատող) քարտ:	CMFO-ի շահագործողը և մյուս անդամները պետք է ձեռք բերեն Food Handler-ի (Սննդի հետ աշխատող) քարտ:	Աշխատանքի ընթացքում պետք է հասանելի լինեն գրավոր / ստանդարտ աշխատանքային գործողությունները (WOP / SOP):
Սննդի պատրաստումը՝ ըստ հաստատման:	Սահմանափակ սննդի պատրաստում:	Օրվա / աշխատանքի վերջում պետք է նետեն չվաճառված սնունդը:
Կարող է ալկոհոլ մատուցել ABC արտոնագրով:	Չի կարող ալկոհոլ վաճառել:	Չեն կարող վաճառել մնացորդները:
Քաղաքապետարանը չի կարող օգտագործել գոտևորման (zoning) օրենքները՝ MEHKO-ն արգելելու համար:	Քաղաքապետարանը կարող է կարգավորել CMFO-ի աշխատանքի ժամանակն ու վայրը:	Աշխատանքները կարող են գովազդվել առցանց:
Կարող է ունենալ միայն 1 լրիվ դրույքով կամ 2 կես դրույքով աշխատող (ընդհանուր շաբաթը մինչև 40 ժամ), որը ընտանիքի կամ տան անդամ չէ:	Չկա աշխատողների թվի սահմանափակում:	Պահանջվում է տեղանքի գնահատում:
Ազատված է Սննդի կետի գնահատման համակարգից:	Հետևում է Սննդի հաստատության գնահատման համակարգին:	
Չի կարող աշխատեցնել մատուցման (catering) բիզնես և չի կարող սնունդ վաճառել սննդի մեկ այլ հաստատության:	Կարող է օժանդակել միջոցառումներին՝ համապատասխան թույլտվություններով:	

County of Los Angeles
Public Health
Environmental Health Division
http://publichealth.lacounty.gov/eh/